ՀՀ Մշակույթի նախարարություն
Ministry of Culture of RA

ԿՈՄԻՏԱՍԻ
Թանգարան Ինստիտուտ
KOMITAS
Museum Institute


# «ԿՈՄԻՏԱՍ» ՓԱՌԱՏՈՆ
# KOMITAS FESTIVAL



09|26 - 10|08



Փառատոնի գեղարվեստական ղեկավար՝ **Միհեր Նավոյան**



*Այս տարի արդեն երկրորդ անգամ իրականացվում է «Կոմիտաս» փառատոնը: Հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադրի անունով փառատոն ունենալն ամենասպասված երաժշտական իրադարձությունն էր, որի պակասն, անշուշտ, զգացվում էր մեր մշակութային կյանքում: Այսօր, ահա, լրացվում է այդ բացը:*

*Շնորհավորում եմ փառատոնի կազմակերպիչներին, մասնակիցներին և հայ երաժշտասեր հասարակությանը այս գեղեցիկ իրադարձության առթիվ: Հուսով եմ, որ ապագայում այս ձեռնարկն իր հեռանկարային զարգացումները կունենա և Կոմիտասի անունով փառատոնն առավել լայն ձևաչափեր կնվաճի:*

ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀՀ մշակույթի նախարար

*This year Komitas Festival takes place already for the second time. To have a festival named after the founder of the Armenian national composer school was the most expected musical event the lack of which was surely obvious in our cultural life. Today this gap is being filled.*

*I congratulate the organizers, participants and Armenian music fan audience for this beautiful event. I hope this undertaking will have its prospective developments in the future, and the festival named after Komitas will gain broader formats.*

HASMIK POGHOSYAN
Minister of Culture of RA

**26 | 09 ԿՈՄԻՏԱՍ «ՊԱՏԱՐԱԳ»**
| *Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի դահլիճ* |

Կատարում է **Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը**
| գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ **Հովհաննես Չեքիջյան** |
ՍԿԻԶԲԸ՝ ԺԱՄԸ 19:00

**29 | 09 ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈ**
| *Կոմիտասի թանգարան-ինստիտուտի դահլիճ* |

Մենակատարներ՝ **Իրինա Զաքյան** |սոպրանո|, **Հայկ Մելիքյան** | դաշնամուր |,
**Սարգիս Բաժբեուկ-Մելիքյան** | բարիտոն |,
նվագակցող՝ **Արմեն Աղաջանյան** | դաշնամուր |
ՍԿԻԶԲԸ՝ ԺԱՄԸ 19:00

**01 | 10 ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈ**
| *Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն* |

Մենակատար՝ **Սվետլանա Նավասարդյան**
ՍԿԻԶԲԸ՝ ԺԱՄԸ 19:00

**04 |10 ԽՄԲԵՐԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈ**
| *Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն* |

**«Գեղարդ» երգեցիկ խումբ** | գեղարվեստական ղեկավար՝ **Միհր Նավոյան**, խմբավար՝ **Անահիտ Պապայան** |
**Երևանի պետական կամերային երգչախումբ** | գեղարվեստական ղեկավար՝ **Հարություն Թոփիկյան** |
**«Հովեր»** պետական կամերային երգչախումբ | գեղարվեստական ղեկավար՝ **Սոնա Հովհաննիսյան** |
ՍԿԻԶԲԸ՝ ԺԱՄԸ 19:00

**08 | 10 ՄԱՆԿԱԿԱՆ ԽՄԲԵՐԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈ**
| *Կոմիտասի թանգարան-ինստիտուտի դահլիճ* |

**«Երգող Հայաստան»** փառատոնի դափնեկիրներ
ՍԿԻԶԲԸ՝ ԺԱՄԸ 15:00

Տնօրեն՝ **Նիկոլայ Կոստանդյան**

2015
Festival Artistic Director: **Mher Navoyan**
Director: **Nikolay Kostandyan**

**26 | 09 KOMITAS – DIVINE LITURGY**
| *National Academic Theater of Opera and Ballet after Spendiaryan* |

Performing by **National Academic Choir of Armenia**
| artistic director and principal conductor **Hovhannes Chekijyan** |
STARTS AT 19:00

**29 | 09 CHAMBER MUSIC CONCERT**
| *Komitas Museum-Institute Hall* |

Soloists: **Irina Zakyan** | soprano |, **Hayk Melikyan** | piano |,
**Sarkis Bazhbeuk-Melikyan** | baritone |, accompanist **Armen Aghajanyan** | piano |
STARTS AT 19:00

**01 | 10 PIANO MUSIC CONCERT**
| *Komitas Chamber Music Hall* |

Soloist: **Svetlana Navasardyan**
STARTS AT 19:00

**04 |10 CHORAL MUSIC CONCERT**
| *Komitas Chamber Music Hall* |

**Geghard Vocal Ensemble** | artistic director **Mher Navoyan**, conductor **Anahit Papayan** |
**Yerevan State Chamber Choir** | artistic director **Harutyun Topikyan** |
**Hover Chamber Choir** | artistic director **Sona Hovhannisyan** |
STARTS AT 19:00

**08 | 10 CHILDREN CHORAL MUSIC CONCERT**
| *Komitas Museum-Institute Hall* |

**"Singing Armenia"** festival winners
STARTS AT 15:00



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ

հիմնադրվել է 1937 թ.: 1961-ից երգչախմբի անփոփոխ գեղարվեստական ղեկավարը և դիրիժորն է Հովհաննես Չեքիջյանը: Երգչախումբը հայտնի է Կոմիտասի և այլ հայ դասական կոմպոզիտորների հիմնական ստեղծագործությունների չգերազանցված կատարումներով: Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը իր ծրագրերը միշտ ներկայացրել է բնագրով (27 լեզուներով): Ծրագիրը ներառում է հայտնի ռեքվիեմներ, օրատորիաներ, մեսսաներ, ինչպես նաև Բախի, Հենդելի, Մոցարտի, Վերդիի, Բեթհովենի, Չայկովսկու, Բորոդինի, Ռոսինիի, Վագների, Շուբերտի, Բելինիի, Բեռլիոզի, Գունոյի, Ֆորեի, Սմետանայի, Մենդելսոնի, Գերշվինի և ուրիշների մեծ և փոքր կտավներ: Երգչախմբի ամենակարևոր ձեռքբերումներից են ԽՍՀՄ երգչախմբային մրցույթի առաջին մրցանակը և երգչախմբային ձայնագրությունների Շառլ Գրո փարիզյան ակադե-

միայի Գրան Պրին: Երգչախումբը 97 համերգ է ունեցել Ս.Պետերբուրգում, մասնավորապես՝ Շոստակովիչի դահլիճում, որից 77-ը՝ հանրահայտ Մռավինսկու սիմֆոնիկ նվագախմբի ընկերակցությամբ: Երգչախումբը ելույթներ է ունեցել հեղինակավոր համերգասրահներում (Մոսկվայի կոնսերվատորիայի և Ս.Պետերբուրգի Շոստակովիչի անվան դահլիճներ, Կոնգրեսի պալատ, Շանզ էլիզեի թատրոն, «Պլեյել», Բոստոնի սիմֆոնիկ, էլիզաբեթ թագուհու, Վեսթմինսթերի մեթոդիստների կենտրոն, Սմետանայի անվան, Ավերի Ֆիշերի համերգասրահներ և այլն): Երգչախմբի համերգներին մասնակցել են Իրինա Արխիպովան, Ելենա Օբրազցովան, Եվգենի Նեստերենկոն, Վլադիմիր Ատլանտովը, Մարիա Բիեշուն, Պաատա Բուրչուլաձեն, Նիկոլայ Պետրովը, Լյուբով Կազարնովսկայան և այլ հանրահայտ արտիստներ:

**STATE NATIONAL ACADEMIC CHOIR OF ARMENIA** was founded in 1937. Since 1961 the artistic director and conductor of the choir is Hovhannes Chekijyan. The choir is well-known by its unprecedented and unequaled performances of major works by Komitas and other Armenian classical composers. The Choir always has presented its programs in the originals (in 27 languages). The program includes famous requiems, oratories, messas, as well as big and small pieces by Bach, Handel, Mozart, Verdi, Beethoven, Tchaikovsky, Borodin, Rossini, Wagner, Schubert, Bellini, Berlioz, Gounod, Fauré, Smetana, Mendelssohn, Gershwin and others. One of most important achievements of the choir is the first prize of Soviet Union Choir Competition and the Grand Prix of Charles Graux Paris Academy of choral recordings. The choir gave 97 concerts in Saint Petersburg, particularly at the Shostakovich Hall, 77 of which are in cooperation of well known Mravinsky Symphony Orchestra. The choir has performed in prestigious concert halls (Moscow Conservatory Hall, Saint Petersburg Shostakovich Hall, Palais des Congrès, La Salle Pleyel, Theatre des Champs-Elysees, Boston Symphonic Hall, Queen Elizabeth Hall, Westminster Methodist Center Hall, The Salle Smetana, Avery Fisher Hall, etc.). Irina Arkhipova, Elena Obraztsova, Evgeny Nesterenko, Vladimir Atlantov, Maria Bieu, Paata Burchuladze, Nikolai Petrov, Lyubov Kazarnovskaya and other famous artists have participated in choir concerts.

Ծրագիր

**ԿՈՄԻՏԱՍ** (1869-1935)
***Պատարագ***

Program

**KOMITAS** (1869-1935)
***Divine Liturgy***



# ԻՐԻՆԱ ԶԱՔՅԱՆԸ

ծնվել է Գյումրիում, ավարտել է Երևանի կոնսերվատորիան և ասպիրանտուրան (պրոֆեսոր Նելլի Փիրումովայի դասարան): Եղել է Հայաստանի Ֆիլհարմոնիկ, Երևանի Սիմֆոնիկ, Ազգային Ռադիոյի սիմֆոնիկ և Ազգային Օպերային թատրոնի մեներգչուհի: Համերգներով հանդես է եկել ԱՄՆ-ում, Կանադայում, Իտալիայում, Իսպանիայում, Ավստրիայում, Հունաստանում, Գերմանիայում, Լիբանանում, Չինաստանում և այլուր: Երգել է անվանի դիրիժորներ Օհան Դուրյանի, Հովհ. Չեքիջյանի, էդուարդ Թոփչյանի, Գաորգ Մուրադյանի, Լորիս Ճգավորյանի, Վոյչեխ Միխնևսկու (Լեհաստան), Լեոն Բոթսթայնի (ԱՄՆ), Ջոն Նելսոնի (ԱՄՆ), Լիոր Շամբադալի (Գերմանիա), Պիեռ Կարլո Օրիցիոյի (Իտալիա) և այլոց ղեկավարությամբ: Մասնակցել է «Վրատիսլավիա կանտաս» (Լեհաստան), «Բադ Ֆուսինգ» (Գերմանիա) և Բիբլոսի (Լիբանան) հեղինակավոր փառատոներին: Մի լեհական թերթ նրա երգեցողությունը նմանեցրել է Ջոան Սադերլանդին, իսկ մի հայկական թերթ նրա մադամ Բաթերֆլայը համարել է մի սև մարգարիտ՝ օվկիանոսում: Կատարել է Մոցարտի, Վերդիի, Բրամսի, Ֆորեի ռեքվիեմները, մեսսաները և օրատորիալ այլ գործեր: Դերերգերից են՝ Մադամ Բաթերֆլայ (Պուչինիի համանուն օպերայում), Ջորջետա (Պուչինիի «Թիկնոցը»), Միմի (Պուչինիի «Բոհեմ»), Լիու (Պուչինիի «Տուրանդոտ»), Պաոլինա (Դոնիձետիի «Պոլիկտոս»), Դեզդեմոնա (Վերդիի «Օթելլո»), Մարիա Բոկանեգրա (Վերդիի «Սիմոն Բոկանեգրա»), Նեդդա (Լեոնկավալլոյի «Պայացներ»), Ապամիա (Վիվալդիի «Տիգրան Մեծ»), Տատյանա (Չայկովսկու «Եվգենի Օնեգին»), Լիզա (Չայկովսկու «Ագռավի թագուհին»):

# IRINA ZAKYAN

**IRINA ZAKYAN** was born in Gyumri. She graduated from the Yerevan Conservatory and completed her post-graduate studies at the same conservatory under the tutelage of Professor Nelli Pirumova. She has performed regularly as soloist with the Armenian Philharmonic, Yerevan Symphony, and National Opera Theater Orchestras. She has toured extensively the USA, Canada, Italy, Spain, Austria, Greece, Germany, Lebanon, China, etc. She made appearances under such conductors as Ohan Durian, Hovhannes Chekijyan, Eduard Topchyan, Gevorg Muradyan, Leon Botstein (USA), Wojciech Michniewski (Poland), John Nelson (USA), Lior Shambadal (Germany), Pier Carlo Orizio (Italy), etc. She has participated in prestigious music festivals such as Wratislavia Cantans (Poland), Bad Fussing (Germany), Biblos (Lebanon). A Polish newspaper wrote that Irina Zakyan's singing reminds that of great singer Joan Sutherlands. An Armenian newspaper wrote: Irina Zakyan's Cio-Cio-San is a black pearl in the ocean. Her repertoire includes Requiems by Mozart, Verdi, Brahms, Fauré, messes, oratorio as well as operatic appearances in Puccinis Madama Butterfly (Cio-Cio-San), Il Tabarro (Giorgetta), Turandot (Liu), La Boheme (Mimi), Donizettis Poliuto (Paolina), Verdis Simon Boccanegra (Maria ), Othello (Desdemona), Leoncavallos I Pagliacci (Nedda), Vivaldis Tigran the Great (Appamia), Tchaikowskys The Queen of Spades (Liza), Eugene Onegin (Tatiana) and other operas.

Ծրագիր

**1. ԿՈՄԻՏԱՍ**
***Ալագյազ – Խնկի ծառ***

**2. ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՋՅԱՆ** (18371898)
***Ավե Մարիա***

**3. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ** (12-ՐԴ ԴԱՐ)
***Նոր Ծաղիկ***

**4. ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆ** (18831935)
***Վարդը***

**5. ԵՐՎԱՆԴ ԵՐԿԱՆՅԱՆ** (ԾՆ. 1951)
***Թախծոտ երգ***

**6. ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉՅԱՆ** (18851967)
***Օրոր***

**7. ԷԴՈՒԱՐԴ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ** (19231986)
***Ախ ինչ լավ են սարի վրա***

Program

**1. KOMITAS**
***Alagyaz – Frankincense Tree***

**2. DICKRAN CHUKHAJIAN** (1837-1898)
***Ave Maria***

**3. NERSES SHNORHALI** (12th century)
***New Flower***

**4. ROMANOS MELIKYAN** (1883-1935)
***The Rose***

**5. YERVAND YERKANYAN** (born 1951)
***A Sorrowful Song***

**6. BARSEGH KANACHYAN** (1885-1967)
***Lullaby***

**7. EDUARD ABRAHAMYAN** (1923-1986)
***Ah, It is so Great on the Mountains***



# ՀԱՅԿ ՄԵԼԻՔՅԱՆԸ՝

ՀՀ վաստակավոր արտիստ, բազմաթիվ մրցույթների դափնեկիր է, այդ թվում՝ 2000 թ. Հռոմում կայացած 20-րդ դարի և ժամանակակից երաժշտության միջազգային «Վալենտինո Բուկկի» դաշնամուրային մրցույթի 2-րդ մրցանակակիր: 2009 թ. հիմնել է «1900+» համերգաշարը՝ նվիրված 20-րդ դարի և ժամանակակից համաշխարհային դաշնամուրային երաժշտությանը, որի պրոպագանդման համար 2012 թ. Մոսկվայի կոմպոզիտորների տունը նրան շնորհել է ոսկե մեդալ: Որպես կոմպոզիտոր հեղինակ է դաշնամուրային, կամերային, վոկալ և սիմֆոնիկ ստեղծագործությունների: Աշխարհի տարբեր երկրներում պարբերաբար վարում է ժամանակակից երաժշտության վարպետության դասեր: 2014 թ. հանրահռչակ «Նաքսոս» երաժշտական ընկերությունը թողարկել է դաշնակահարի սոլո ալբոմը:

# HAYK MELIKYAN,

an Honorary Artist of the Republic of Armenia, is a laureate of many international competitions, including the Second Prize in the International Piano Competition of the 20th Century and Contemporary Music Premio Valentino Bucchi in Rome in 2000. In 2009, he initiated 1900+ concert series dedicated to the 20th century and contemporary world piano music. In 2012, for his contribution and promotion to the world contemporary music he was awarded with a Gold Medal by Moscow Composers Union. As a composer, Hayk Melikyan is an author of piano solo, chamber, instrumental, vocal and symphonic works. In 2014, his solo album was released by prestigious NAXOS musical company.

Ծրագիր

**1. ԿՈՄԻՏԱՍ**
***Չորս պար (Երանգի, Ունաբի, Մարալի, Շուշիկի)***

***Չորս երգ (Ես աղջիկ եմ, Էրվում եմ, Տուն արի, Լուսնակը սարի տակին)***

**2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԵԼԼԱԼՅԱՆ** (1937-1990)
***Նվիրում Կոմիտասին*** (ՍՈՆԱՏ, 1982)
***Largo, Allegro***

Program

**1. KOMITAS**
***Four dances (Yerangi; Unabi; Marali; Shushiki)***

***Four songs (I am a Girl; I am Burning; Come Home; The Moon Under the Mountain)***

**2. HARUTYUN DELLALIAN** (1937-1990)
***Dedication to Komitas*** (SONATA, 1982):
***Largo, Allegro***



# ՍԱՐԳԻՍ ԲԱԺԲԵՈՒԿ-ՄԵԼԻՔՅԱՆԸ

ծնվել է 1990 թ. Երևանում: 2007-2011 թթ. ուսանել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում՝ ստանալով ճարտարապետի դիպլոմ: 2015 թ. ավարտել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ակադեմիական վոկալ բաժինը: 2014 թ. սկսած վարպետաց դասեր է ստացել ՀՀ ժողովրդական արտիստ Բարսեղ Թումանյանից: Հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիր է: Ելույթներ է ունեցել մի շարք անվանի դիրիժորների հետ:

# SARGIS BAZHBEUK-MELIKYAN

was born in 1990, in Yerevan. In 2007-2011, he studied at the Yerevan State University of Architecture and Construction, received a diploma in architecture. In 2015, he graduated from the academic vocal department of the Komitas conservatory. Since 2014, he received master classes from the Peoples' artist of Armenia Barsegh Tumanyan. He is a laureate of national and international competitions. He has worked with number of prominent conductors.

Ծրագիր | Program

**1. ԿՈՄԻՏԱՍ**
***Meeres stille***
***Glückliche Fahrt***
***Կռունկ***
***Հայաստան***

**2. ՊԵՏՐՈՍ ԱՖՐԻԿՅԱՆ**
(1854-1908)
***Արաքսի արտասուքը***

**3. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆ**
(1871-1928)
***Այ վարդ***

---

**1. KOMITAS**
***Meeres stille***
***Glückliche Fahrt***
***Crane***
***Armenia***

**2. PETROS AFRIKYAN**
(1854-1908)
***The Tears of Araxes***

**3. ALEXANDER SPENDIARYAN**
(1871-1928)
***You, Rose***



# ԱՐՄԵՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ

ծնվել է 1971-ին: 1996-ին ավարտել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիան: Աշխատում է Երևանի պետական կոնսերվատորիայի վոկալ ամբիոնում: Որպես նվագակցող մասնակցել է մի շարք հանրապետական և միջազգային մրցույթների և փառատոների: Միջազգային «Ռոմանսիադա» մրցույթում (Մոսկվա) ստացել է «Լավագույն նվագակցող» անվանակարգի մրցանակը (2002):

Որպես մենակատար և նվագակցող բազմիցս ելույթներ է ունեցել տարբեր երկրներում (Ռուսաստան, Իսպանիա, Ավստրիա, Բելգիա, ԱՄԷ, Մեծ Բրիտանիա): Համագործակցել է հանրահռչակ երաժիշտներ Արաքս Դավթյանի, Բարսեղ Թումանյանի, Էրիկ Կուրմանգալիևի, Արամ Ղարաբեկյանի, Ադամ Ռապայի, Պլասիդո Դոմինգո-կրտսերի և այլոց հետ:

# ARMEN AGHAJANYAN

was born in 1971. In 1996, he graduated Yerevan State Conservatory. He works at the Vocal Department of Yerevan State Conservatory. As an accompanist he participated in numerous competitions and festivals, awarded The Best Accompanist prize at the Romansiada International Singing Competition in Moscow in 2002. As an accompanist and soloist he had number of concerts in Armenia, Russia, Spain, Austria, Belgium, UAE, Great Britain. He has collaborated with world-renowned artists such as Arax Davtyan, Barsegh Tumanyan, Erik Kurmangaliev, Aram Gharabekyan, Adam Rapa, Placido Domingo Jr. and others.

# ՍՎԵՏԼԱՆԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԸ՝

միջազգային ճանաչում վայելող դաշնակահարուհի, Շումանի, Բախի, Եղիսաբեթ թագուհու անվան, Սիդնեյի միջազգային մրցույթների դափնեկիր, ելույթներ է ունեցել աշխարհի ամենահեղինակավոր փառատոներում և համերգասրահներում՝ Մոսկվայի Կոնսերվատորիայի Մեծ դահլիճ, Սիդնեյի օպերա, Բրյուսելի Գեղարվեստի պալատ, Փարիզի «Գավո», Լայպցիգի «Գևանդհաուզ», Բուենոս Այրեսի «Կոլոն» թատրոն, Տոկիոյի «Ասահի», Օսակայի «Ֆենիքս», Ստոկհոլմի «Նյուբրոքայեն» համերգասրահներ և այլն: Համերգներով հանդես է եկել աշխարհի ավելի քան 40 երկրներում, համագործակցել անվանի



երաժիշտների հետ (Ե. Սվետլանով, Վ. Գերգիև, Վ. Սինայսկի, Կ. Էտտի, Քր. Ուորեն-Գրին, Է. Վիրսալաձե, Ե. Կիսին, Վ. Սպիվակով, Յու. Բաշմետ և շատ ուրիշներ): Սվետլանա Նավասարդյանի մեկնաբանած երկերի ցանկը ներառում է դաշնամուրի և նվագախմբի համար գրված վաթսունից ավելի կոնցերտ. այդ թվում՝ Բախի, Մոցարտի և Բեթհովենի բոլոր կոնցերտները, մոնոգրաֆիկ մենանվագային ծրագրեր: Սերտորեն համագործակցում է Փարիզի «Էկոլ նորմալ դը մյուզիկ», Ստոկհոլմի «Փոքր ակադեմիա», Էսսենի Երաժշտության բարձրագույն դպրոցի և այլ հեղինակավոր հաստատությունների հետ Ֆրանսիայում, Գերմանիայում, Ճապոնիայում: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հրավիրյալ պրոֆեսորը վարպետության դասեր է վարում աշխարհով մեկ: 2010-ից ՀՀ կառավարական բարձրագույն պարգևի՝ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանակիր է:

# SVETLANA NAVASARDAN,

a pianist of international recognition, is a laureate of the Schumann, Bach, Queen Elisabeth and Sidney international piano competitions. She has performed at

high-profile international festivals and the major concert halls around the world: Great Hall of Moscow Conservatory, the Opera House of Sydney, the Palais des Beaux-Arts of Brussels, the Salle Gaveau of Paris, the Gewandhaus of Leipzig, the Teatro Colon of Buenos Aires, the Asahi Hall of Tokyo, the Phoenix-Hall of Osaka, the Nybrokajen of Stockholm. She

has widely toured internationally with recitals in more than 40 countries, cooperated with numerous world-renowned soloists and prominent conductors (E. Svetlanov, V. Gergiev, V. Sinaysky, K. Etti, Ch. Warren-Green, E. Virsaladze, E. Kissin, V. Spivakov, Y. Bashmet, etc.). Her repertoire includes more than 60 concertos for the piano and orchestra only, among them all the concertos of Bach, Mozart and Beethoven in line with a monifold of monographic programs. A guest professor at Yerevan Komitas Conservatory, she affiliated closely with prominent musical institutions: Ecole Normale de Musique de Paris, Lille Academia in Stockholm, Hochschule für Musik in Essen, as well as other musical establishments in France, Germany, Japan. She holds master-classes all around the world. In 2010 Svetlana Navasardyan was awarded with St. Mesrop Mashtots Order, the highest government award in Armenia.

Ծրագիր

**1. ԿՈՄԻՏԱՍ**
***Յոթ երգ***

**2. ԳԱԳԻԿ ՀՈՎՈՒՆՑ** (ԾՆ. 1930)
***Սոնատ N 1 «Լադի Հարմոնիան» (Նվիրվում է Սվետլանա Նավասարդյանին)***
***I – Սիմետրիկ լադ, II Լադի եռահնչյունները, III Լադի հարմոնիկ տոկատա***

**3. ԿՈՄԻՏԱՍ**
***Վեց պար (Երանգի, Ունաբի, Մարալի, Շուշիկի, Հետ-առաջ, Շորոր)***

**4. ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ** (ԾՆ. 1939)
***Թավ տոների երեք պիես (Նվիրվում է Սվետլանա Նավասարդյանին)***

**5. ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ** (1921-2012)
***Պոեմ***

**6. ԿՈՄԻՏԱՍ**
***Մշո շորոր***

**7. ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ** (1921-1983)
***Վեց պատկեր (Իմպրովիզացիա, Ժողովրդական, Ինտերմեցցո, Տոկատին, Խորալ, Սասունցիների պարը)***

Program

**1. KOMITAS**
***Seven Songs***

**2. GAGIK HOVUNTS** (BORN 1930)
***Sonata N 1 The Harmony of Mode (dedicated to Svetlana Navasardyan)***
***I – Symmetric Harmony, II Triad of Harmony, III – Harmonic Toccata of Harmony***

**3. KOMITAS**
***Six Dances (Yerangi; Unabi; Marali; Shoushiki; Back-and-forth; Amble)***

**4. TIGRAN MANSURIAN** (BORN 1939)
***Three Pieces of Bold Tunes (dedicated to Svetlana Navasardyan)***

**5. EDVARD MIRZOYAN** (1921-2012)
***Poem***

**6. KOMITAS**
***The Amble of Mush***

**7. ARNO BABAJANYAN** (1921-1983)
***Six Images (Improvisation; Folk; Intermezzo; Toccata; Chorale; Sasun Dance)***



# «ԳԵՂԱՐԴ» ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲԸ

կազմավորվել է 2001 թ. մեներգչուհի Անահիտ Պապայանի կողմից, գեղարվեստական ղեկավարն է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր Մհեր Նավոյանը: Խմբի գլխավոր նպատակն է հայ հոգևոր և ժողովրդական երգերի տարածումը Հայաստանում և արտերկրում: Անսամբլը բազմաթիվ համերգներով հանդես է եկել Գերմանիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Ֆինլանդիայում, Իտալիայում, Չեխիայում, Լեհաստանում, Բելգիայում, Բելառուսում, Լիբանանում, Ռուսաստանում, Շվեդիայում: Մասնակցել է միջազգային փառատոների և մրցույթների Լեհաստանում, Ռուսաստանում, Լիբանանում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելառուսում, Չեխիայում, Ֆինլանդիայում: Համույթն արժանացել է Գրան Պրիի «Կոլոժսկի բլագովեստ» փառատոնում (Գրոդնո, Բելառուս), իսկ «Հայնովկայի եկեղեցական երաժշտության օրեր» փառատոնում (Լեհաստան) արժանացել է առաջին մրցանակի:

# GEGHARD VOCAL ENSEMBLE

was founded in 2001 by soloist and conductor Anahit Papayan; it is a female ensemble of eight singers. The artistic director is Dr. Mher Navoyan, medievalist-musicologist, professor of Yerevan Komitas State Conservatory. The main aim of the ensemble is to present Armenian sacred and folk choral music in Armenia and abroad. The Ensemble has had numerous concert tours in Germany, Austria, Finland, France, Czech Republic, Belarus, Poland, Italy, Belgium, Lebanon, Russia, Sweden. The Ensemble participated in international festivals and competitions in Poland, Russia, Lebanon, Germany, France, Czech Republic, Finland. The ensemble awarded Grand Prix in Kolozhski Blagovest (Grodno, Belarus) festival and first prize in Hajnowkas Days of Orthodox Music (Hajnowka, Poland).

Ծրագիր | Program

**1. ԿՈՄԻՏԱՍ ԱՂՑԵՑԻ**
(7-ՐԴ Դ.)
***Կոմիտաս***
***Անձինք նուիրեալք***

**2. ԿՈՄԻՏԱՍ**
***Այ տղա մեր գեղեցի***
***Դուն հալալ մերիկ***
*(մենակատար՝ Լուիզա Երեմյան)*
***Եղնիկ***
*(մենակատարներ՝*
*Անահիտ Պապայան, Լուիզա Երեմյան)*
***Անձրևն եկավ***

**3. ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
(19301998)
***Մանդր անձրև***
*(մենակատարներ՝ Լուիզա Երեմյան,*
*Տաթև Թադևոսյան,*
*Ռուզաննա Հարությունյան)*
***Ամպել ա, թոն չի գալիս***
***Նանարի նա***
*(մենակատարներ՝ Անահիտ Պապայան,*
*Ռուզաննա Հարությունյան)*

---

**1. KOMITAS AGHTSETSI**
(7TH CENTURY) KOMITAS
***Devoted Souls***

**2. KOMITAS**
***You, Lad, from our Village***
***You, Dear Mammy***
*(soloist: Luiza Yeremyan)*
***Deer***
*(soloists: Anahit Papayan,*
*Luiza Yeremyan)*
***The Rain Came***

**3. EDGAR HOVHANNISYAN**
(1930-1998)
***Drizzling***
*(soloists: Luiza Yeremyan,*
*Tatev Tadevosyan,*
*Ruzanna Harutyunyan)*
***It is Clouded, but Does not Rain***
***Nanari na***
*(soloists: Anahit Papayan,*
*Ruzanna Harutyunyan)*

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ

ստեղծվելով 1996 թ. ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Հարություն Թոփիկյանի կողմից, Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի բարձր հովանու ներքո՝ կարճ ժամանակահատվածում նվաճել է իր ուրույն տեղը հայ երաժշտական հանրության շրջանում, ներկայացնելով դասական և ժամանակակից կոմպոզիտորների խմբերգային բարձրաճաշակ կատարումներ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:
2009 թ. երգչախումբն ստացել է պետական կարգավիճակ: Մասնակցել է միջազգային փառատոների Իտալիայում, Գերմանիայում, Նորվեգիայում, Ռուսաստանում, Ֆրանսիայում: 2015 թ. ջազ դաշնակահար Տիգրան Համասյանի հետ «Լույս ի լուսո» նախագծի շրջանակներում համատեղ համերգային կատարումներով հանդես է եկել Հայաստանում, Վրաստանում, Թուրքիայում և եվրոպական մի շարք երկրներում:

# YEREVAN STATE CHAMBER CHOIR,

founded in 1996 by Honored Art Worker Harutyun Topikyan, under generous sponsorship of His Holiness

Catholicos of All Armenians Garegin I, became one of the well-known musical collectives performing outstanding choral music of classic and contemporary composers in Armenia and abroad. In 2009 the choir gained a state status. The choir participated in international festivals in Italy, Germany, Norway, Russia, France. In 2015, the choir participated in Luys i Luso (Light of Light) musical project with jazz pianist Tigran Hamasyan; joint performances in Armenia, Georgia, Turkey and Europe.



Ծրագիր

**1. ԿՈՄԻՏԱՍ**
***Ո՛ն թինդ ի խինդ***
***Առավոտ լուսաբեր***
***Հայրիկ, հայրիկ, քո հայրենիք***

**2. ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉՅԱՆ** (18851967)
***Խնջույք*** *(մենակատարներ՝ Թամարա Մոսինյան, Արեն Ավետյան)*
***Օրոր*** *(մենակատար՝ Մաքրուհի Խաչատուրյան)*

**3. ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** (19301998)
***Սուրմալուի հորովել*** *(մենակատար՝ Սեյրան Ավագյան)*
***Ցորեն եմ ցանե*** *(մենակատարներ՝ Մաքրուհի Խաչատուրյան, Թամարա Մոսինյան)*

**4. ԵՐՎԱՆԴ ԵՐԿԱՆՅԱՆ** (ծն. 1951)
***Ավե Մարիա*** *(ստեղծագործությունը նվիրվում է Հռոմի Պապ Ֆրանցիսկոսին՝ որպես խոնարհանք և շնորհակալություն Մեծ եղեռնի 100-ամյակին ցուցաբերած բացառիկ կեցվածքի համար):*

Program

**1. KOMITAS**
***Rumble of Laughter***
***Morning Dawn***
***Hayrik, Hayrik, Your Fatherland***

**2. BARSEGH KANACHYAN** (1885-1967)
***Fest***
*(soloists: Tamara Mosinyan, Aren Avetyan)*
***Lullaby*** *(soloist: Makruhi Khachaturyan)*

**3. EDGAR HOVHANNISYAN** (1930-1998)
***Surmalu Horovel***
*(soloist: Seyran Avagyan)*
***I Sowed Wheat*** *(soloists: Makruhi Khachaturyan, Tamara Mosinyan)*

**4. YERVAND YERKANYAN**
(BORN 1951)
***Ave Maria*** *(the work is dedicated to Pope Francis as a humble and gratitude for his grateful attitude for the 100th anniversary of the Armenian Genocide).*





# «ՀՈՎԵՐ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ

1992 թ. հիմնել և ղեկավարում է Երևանի կոնսերվատորիայի դոցենտ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սոնա Հովհաննիսյանը: Երգչախումբը հանդես է եկել խմբերգային ներկայացում-ներով, մեծակտավ վոկալ-սիմֆոնիկ, օպերային, կամերային ժանրերի դասական և փորձարարական նախագծերով:

«Հովերը» հանդիսանում է հայ կոմպոզիտորների մի շարք ստեղծագործություն-ների ստեղծման նախաձեռնողն ու առաջին կատարողը (Վ. Շարաֆյան, Ա. Ավանեսով, Ա. Ավիվյան. Ս. Երկանյան, Ե. Երկանյան, Ս. Բաբաթորոսյան, Վ.Աճեմյան, Վ. Մանուկ-յան): Երգչախումբը ձայնագրել է 7 ձայնասկավառակ: Համերգներով հանդես է եկել Իտալիայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Ռու-սաստանում, Լեհաստանում, Թայվանում, Բելգիայում, Մերձբալթյան երկրներում, ԱՄՆ-ում, Շվեյցարիայում: Մասնակցել է տասնյակ մրցույթ-փառատոների, 2000-ին Լինցում (Ավստրիա) կայացած երգչախմբերի միջազգային օլիմպիադայում արժանա-ցել է ոսկե մեդալի: Հանդես է եկել «Տեատրո դալ Վերմե», «Սիտե դե լա Մյուզիք», «Լը Քուարց», «Սթրեթմոր», «Քարնեգի հոլ» հեղինակավոր դահլիճներում: Ս. Գուբայդուլի-նայի, Ռ. Շչեդրինի, Ք. Պենդերեցկու, Գ. Կանչելիի և մի շարք այլ մեծանուն ժամանա-

կակից կոմպոզիտորների ստեղծագործությունների «Հովերի» կատարումները արժա-նացել են բարձր գնահատականների հայ և այլազգի երաժշտագետների հոդվածնե-րում: «Հովեր» կամերային երգչախումբը համերգներով հանդես է եկել մի շարք մեծա-նուն երաժիշտների հետ (Գ. Կրեմեր, Ա. Մուստոնեն, Ռ. Ծերվենիկաս, Դ. Գերինգաս, Ջ. Նելսոն, Մ. Կլաուզա, Պ. Վերնիկով, Չայկովսկու անվան տրիո):

# HOVER STATE CHAMBER CHOIR

was founded in 1992 and is directed by Yerevan Conservatory professor, Honored Art Worker of Armenia Sona Hovhannisyan. The choir has performed choral performances, large-scale vocal, symphonic, opera, chamber music, classical and experimental projects. Hover has been the initiator and first performer of several works by Armenian composers (V. Sharafyan, A. Avanesov, A. Azizyan S. Yerkanian, Y. Yerkanyan, S. Babatorosyan, V. Ajemyan, V. Manukyan). The choir has recorded 7 CDs. Hover had concerts in Italy, France, Great Britain, Germany, Austria, Russia, Poland, Taiwan, Belgium, the Baltic countries, USA, Switzerland. Has participated in numerous of competitions and festivals, in 2000, the choir won the gold medal at the International Choir Olympiad in Linz (Austria). Performed in Teatro Dal Verme, Cité de la musique, Le Quartz, Stretmor, Carnegie Hall. Hover's performances of compositions by S. Gubaidulina, R. Shchedrin, K. Penderecki, G. Kancheli, as well as a number of other prominent contemporary composers gained great appreciation. Hover Chamber Choir has appeared with a number of prominent musicians (G. Kremer, A. Mustonen, R. Servenikas, D. Geringas, J. Nelson, M. Klauza, P. Vernikov, Tchaikovsky Trio, etc).

Ծրագրում

**1. ԿՈՄԻՏԱՍ**
***Խորհուրդ խորին***
***Լուսնակը սարի տակին***
***Ել, ել***

**2. ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ** (ԾՆ. 1939)
***Ծիածան***

**3. ԿՈՄԻՏԱՍ**
***Հոգևոր և աշխարհիկ խմբերգեր***

**4. ՎԱՉԵ ՇԱՐԱՖՅԱՆ** (ԾՆ. 1966)
***Ձնե ձոն (հատված կանտատից)***

**5. ԵՐՎԱՆԴ ԵՐԿԱՆՅԱՆ** (ԾՆ. 1951)
***Նավկիկե***

**6. ԱՆՆԱ ԱԶԻԶՅԱՆ** (ԾՆ. 1965)
***Զուգահեռ (հատված խմբերգային ներկայացումից)***

Program

**1. KOMITAS**
***O Mystery Deep***
***The Moon Under the Mountain***
***Stand Up***

**2. TIGRAN MANSURYAN** (BORN 1939)
***Rainbow***

**3. KOMITAS**
***Church and folk choral songs***

**4. VACHE SHARAFYAN** (BORN 1966)
***Snow Cantata (excerpt)***

**5. YERVAND YERKANYAN** (BORN 1951)
***Nausicaa***

**6. ANNA AZIZYAN** (BORN 1965)
***Parallel (excerpt from choral performance)***

Խմբագիր՝ **Արծվի Բախչինյան**
Ձևավորող՝ **Կառլեն Մանուկյան**

Text editor: **Artsvi Bakhchinyan**
Designer: **Karlen Manoukyan**



ARMENPRESS

Տեղեկությունների համար / More info

Հեռ.՝ / Tel.: +374 11 570 570